

ԷԶԵՐ ՆՈՐ_ԶՈՒՂԱՅԻ ՄԻ ՀԻՆ ԱՊԱՐԱՆՔԻ
 ԵՒ
 ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻԻՒՆԻՑ

Իրանի զեղարուեստական մշակոյթի պատմութեան մէջ առանձնաշատուկ տեղ է զբաւում Սէֆէվեան շրջանի արուեստը, որի թանկագոյն մնացորդները այսօր դուք տեսնում էք Իրանի հին մայրաքաղաքի՝ Սպահանի պատմական շէնքերում: Այդ տեսակէտից առանձնապէս ուշադրաւ են եւ անպայման զեղարուեստական խոշոր արժէք են ներկայացնում Ալի Ղափուհ, Զեհէլ Սուրունը, Մէշչէղ Շահը, Լուքֆուլլահը եւ Մէշչէղ Զամին: Ճարտարապետութեան, նկարչութեան եւ յափճապակիի դասական արուեստի լուռ վիպաներ են դրանք, որոնց մէջ դուք տեսնում էք ո՛չ միայն նուրբ ծաղկանկարներ, զարդանկարներ, վարդանկարներ, թռչնանկարներ, այլարանական տառեր, այլ եւ ժամանակաշրջանի իրական կեանքը պատկերող մոտիվներ, որոնք իրենց ուրոյն ոճով եւ բովանդակութեամբ ձեզ ցայտուն պատկար են տալիս 16րդ եւ 17րդ դարաշրջաններում Իրանում իշխող զեղարուեստական շարժման մասին:

Պատմական այդ սքանչելի արուեստի որոշ էջերը նկարիչ Սարգիս Սաչատուրեանն արդէն վերականգնել է առանձին կտաւների վրայ եւ այսօր ցուցադրում է արտասահմանում: Նկարներ, որոնք իրենց վրայ են կենտրոնացրել միջազգային ամենախիստ գեղեցկապէտ քննադատների ուշադրութիւնը: Այդ հանդամանքն էլ ինքնին ընդգծում է Իրանի դասական նկարչութեան, զլխաւորապէս Սէֆէվեան որմնանկարչութեան, խոշոր արժէքը:

Սակայն անվերապահօրէն պիտի արձա-

նագրել, որ նկարիչ Սաչատուրեանը, ժամանակի սղութեան պատճառով, հնարաւորութիւն չի ունեցել օգտուելու իրանեան սքանչելի որմնանկարների բոլոր մնացորդներից: Նա չի կարողացել ընդօրինակել մանաւանդ արուեստի այն ընտիր մոտիվները, որոնք այսօր զարդարում են Նոր Զուգայում մի քանի հին հայ խաչաների ապարանքները:

Պատմական փաստ է, որ երբ Նոր Զուգայեցի խոջա վաճառականները զիրքաւորում են սնտեսապէս, համապատասխան որմնանկարներով զարդարել են տալիս ո՛չ միայն Նոր Զուգայի Ս. Ամենափրկչեան վանքն ու Եկեղեցիները, այլ եւ իրենց բնակութեան համար կառուցել են տալիս ճարտարապետական ուրոյն ոճով գեղեցիկ ապարանքներ, որոնց պատերի վրայ այսօր դուք տեսնում էք վարպետ վրձինով նկարուած զեղարուեստական պատկերներ, որոնցից շատերը, զժրաղզարար, զոհ են գնացել ժամանակի կլանող ժանիքներին եւ մարդկային տղիտութեան:



Մտնում եմ ահա, պատմական այդ ապարանքներից մէկը: Դա 17րդ դարում Նոր Զուգայի Դաւրէթ թաղում կառուցուած եւ այժմ Տէր Բարսեղ քհնյ. Ալեքսիեանի պատկանող բնակարանն է: Գեղեցիկ պարտիզով, բարձր կանաչ ծառերով եւ քարաշէն մեծ աւազանով զարդարուն մի ընդարձակ ապարանք է դա, որ իր ճարտարապետական պարզ, բայց ուրոյն ոճով եւ պատերի ուղիւսէ նուրբ ծաղկանկար-

ներով միանգամայն տարբերում է Նոր Զուգայի միւս բնակարաններից: Տարբերում է ո՛չ միայն իր հին արուեստով այլ և իր փաստոր անցեալի պատմական էջերով: Մ՞ով կարող է այսօր մտարեբել, որ պատմական այդ ապարանքում մի ժամանակ ապրել են Նոր Զուգայեցի խոջաների մի քանի սերունդներ: Մ՞ով կարող է մտածել, որ այդ յարկի ռակ ժողովրդի ցուերով տանջուել է Նոր Զուգայեցի մի խոջա և իր վճռական անձնութեամբ կարողացել է Աֆղան Մահմուդ իշխանի սրածութիւններից փրկել մի ամբողջ ժողովրդի կեանքը: Մ՞ով կարող է այսօր մտարեբել, որ այդ ապարանքի կամարների տակ ճոխ խնջոյքներ են սարքուել Իրանի արքաների համար: Այդտեղ է յաճախ հիւրասիրուել Ծահ Սուլթան Զօսէյնը: Այդտեղ է մեծարուել Ֆաթալի շահը: Փաստեր, որոնք ո՛չ միայն ընդդժում են Նոր Զուգայի Հայերի հանդէպ Իրանի արքաների բարեացակամ վերարեմունքը, այլ և վկայում այն առանձին նշանակութեան մասին, որ ժամանակի Նոր Զուգայեցի մեծահարուստ խոջաներն ունեցել են Իրանի համար:

Բայց աւելի բնորոշն այն է, որ դուք այսօր ժողովուրդի շրթների վրայ կարդում էք պատմական ապարանքի շուրջը հիւսուած սիրային դրուագներ և, որ զլխաւորն է, այնտեղ տեսնում էք որմնանկարչութեան թանկագին էջեր: Երեւոյթներ, որոնք էլ աւելի արժէքաւորում են պատմական ապարանքի հասարակական նշանակութիւնը:

*

Ապարանքի մասին աւելի պայծառ զաղափար տալու համար այստեղ արձանագրենք պատմական այն էջերը, որոնք հասարակական բնոյթ ունեն:

Ապարանքի պատմութեան ամենարնորոշ շրջանը սերտ կերպով կապուած է ժամանակի հարուստ վաճառական խոջա Մարգար Լղվորեան տոհմի հետ: Նոր Զուգայի հայ վաճառականական դրամալիսի զարգացման պատմութեան մէջ խոջա Մարգարն ունի իր առանձին էջը: Իր ժամանակի ճկուն, ճարպիկ այդ վաճառականն առեւտրական գործերով Նոր Զու-

գայից յաճախ անցնում է Հնդկաստան, Մադրաս և կարճ ժամանակում անում տնտեսական խոշոր նուաճումներ: Բայց նա իր հարստութեամբ ո՛չ միայն պատմաշրջանի Նոր Զուգայեցի խոջա վաճառականների մէջ կենտրոնական տեղ է զբաւում, այլ և աչքի է ընկնում քաղաքական ասպարիզում, զճեր, որոնցով նա զբաւում է Իրանի արքայ՝ Ծահ Սուլթան Զօսէյնի համակրանքը: Այդ հանգամանքն է արձանագրում այսօր Նոր Զուգայի հայ ժողովուրդի շրթների վրայ շրջող մի սիրային աւանդութիւն, որն իր քնարական բովանդակութեամբ պատկերում է ժողովրդական բանահիւսութեան մի դողարիկ էջը: Գծենք այդ բանաստեղծութեան նկարը:

Մայիսեան մի պայծառ առաւօտ Ծահն իր պալատականներով հիւր է գալիս խոջա Մարգարի ապարանքը: Հետատես խոջան տանից դուրս է ուղարկում իր սիրուն հարսներին: Սակայն նրանցից ամենաչքնաղբ զազունի բարձրանում է ապարանքի վերելի յարկը և թաքնուում բաց պատուհանի առջև: Նա անշափ ցանկանում է զէթ մի անգամ տեսնել Իրանի արքային: Բայց ահա մարմարէ փոքրիկ աւազանի ջինջ, զուլալ ջրերը ցոլացնում են հարսի շքնաղ ստուերը: Նրա անուշ ժպտը, արտայայտիչ, խօսուն աչքերը շուտով խօսում են աւազանի մօտ բաղմած արքայի սրտի լարերի հետ: Եւ նա վճռում է շքնաղ Հայուհին դարձնել իր պալատի սիրունների զարդը: Մտածում է երկար և գտնում մի հնար: Առաջարկում է խոջա Մարգարին՝ ապարանքի վերելի յարկը նուիրել իրեն: Խոջան բարի ժպտով խոնարհուում է արքայի հրամանի առաջ, առանց իմանալու, որ այնտեղ է թաքնուած իր ապարանքի ամենասիրուն հարսը: Ծահն իր պալատականներից հրամայում է իր մօտ բերել զեղեցիկ հարսին: Ահա այդ ժամանակ միայն խոջա Մարգարը հասկանում է Ծահի ծրարի էութիւնը և խորը վշտով թախծում: Դէպքը շուտով շրջում է ժողովրդի շրթների վրայ, իսկ ժամանակի աշուղներն երգի նիւթ են դարձրնում: Ահա ժողովրդի բերնում պահուած այդ երգի փշրանքը:

Շահի սիրած բանգ խաբոն'ն,
 Գո՞ր 1) սիրեցիր սեւ կատուն .
 Թուսու կոլ-կոլ 2) մեխերը,
 Քարշ-ֆարշ տարան տեղերը 3) .
 Մարմար հավզում 4) լուղացար,
 Եարա՛ր ո՞ւմնից յուղացար 5) :

Մի այլ վարիանտում կարգում ենք՝

Շահում, շահում Շախաղը՝
 Խօջա Մարգարեցի խաբար,
 Մարգարը մտաւ դուլաբը,
 Վերէն շաղ տուին գուլաբը:
 Շահի սիրած Թանգխաբոն'ն,
 Գո՞ր սիրեցիր սեւ կատուն *) :

Այնուհետեւ պատմական դէպքերը մի անգամ եւս փոթորկում են խոջա Մարգարի հոգեկան աշխարհը: 1722 թուականն է դա: Այդ թուին Աֆղաններու Մահմուդ իշխանը պաշարում է Սպահանը եւ ժողովրդին անխնայ կոտորում: Ահա այդ օրհասական եւ վճռական փասնդի ժամանակ հրապարակ է գալիս խոջան: Նա իր հետ վերցնելով Նոր Զուղայեցի 54 խոջաներ, անձամբ ներկայանում է Մահմուդ իշխանին եւ խնդրում է խնայել անմեղ ժողովրդին: Իշխանը զիջում է, բայց իբրեւ փրկանք պահանջում 70,000 թուման փող: Այդպիսով, խոջա Մարգարի շնորհիւ, Նոր Զուղայի հասարակութիւնը փակում է իր պատմական ապարանքի դռները շահի հարստահարութիւնների շրջանում, նա փակում է իր պատմական ապարանքի դռները եւ իր ընտանիքով, սարերի միջով, փախչում Մաղրաս: Այդ օրից ապարանք՝ երկար ժամանակ մնում է անտէր եւ անխնամ: 18րդ դարում Սպահանցի մեծահարուստ փաճառական Միր Սադղը գնում է ապարանքը եւ վերակառուցման ենթարկելուց յետոյ՝ ծախում յայտնի հարուստ

աղա Ամիրեանների: Նրանք ո՛չ միայն ապարանքի տէր են դառնում, այլ եւ գնում են տանկից ընկած այգիները եւ ընդարձակ հողամասերը, որոնց վրայ կառուցել են տալիս մի շարք խնութիւններ, մի դարբաս եւ նոյնիսկ մի բաղնիս, որն այսօր ծառայում է Նոր Զուղայի ժողովրդին: Դա այն պատմաշրջանն է, երբ Թաշաւորում էր Փաթալի Շահը:

*

Իրանի պատմութեան մէջ առանձնաշատուկ տեղ է գրաւում Փաթալի Շահի իշխանութեան ժամանակաշրջանը: Դա 1795—1834 թուականն է, որ բնոյթով է ամբողջ երեսուն եւ ինը տարուայ մի խաղաղ շրջան: Շահն Իրանի գահին վրայ բաղձելուց յետոյ, կարճ ժամանակում, վերջ է տալիս ներքին խռովութիւններին եւ հարստահարութիւններին: Իրանի ժողովրդի, առանձնապէս Նոր Զուղայի Հայերի համար, սկըսում է անտեսական վերակառնման մի նոր շրջան (*): Ահա թէ ի՛նչպէս է պատկերացնում Նոր Զուղայի պատմագիր Յարութիւն Տէր Յովհաննէանցն իր «Պատմութիւն Նոր Զուղայի» շրջի 397րդ էջում Փաթալի Շահի թագաւորութեան շրջանը.

«Ի Ժառանգել, Փաթալի Շահի զթագաւորութիւնն Պարսից՝ անդորրացաւ եւ Զուղայ, եւ հարստահարութիւնք՝ կեղեքմունք՝ տուկանք տարապարտուց եւ վիշա՛ր կողմանէ տէրութեան տեղի տուեալ հեռացան յաւերակաց Զուղայու: Քաղցր ակնարկութիւն ունեցաւ Արքայն առ աղոյն Հայոց եւ յամի 1832 շնորհեաց Ամենափրկչեան վանքն զհրովարտակ շնորհելոյ յամի 262 թուման պարգև, որով ամենայն վանքական կալուածք զերծ ՚ի հարկացն եղեն»:

Շահն իր բարեացակամ վերաբերմունքով

1) Ինչպէս, 2) կոյր, 3) Անկողին, 4) Աւագան, 5) Յղիանայ:

*) Աւանդութիւնն ասում է, որ արքան ունենում է մի սեւ պալատական, որը նոյնպէս սիրում է Լզվորեցի հարսին. նրան ժողովուրդն իր երգի մէջ կոչում է՝ «սեւ կատու»:

*) Միայն մի դէպք վրդովում է Նոր Զուղայի Հայերի խաղաղ կեանքը: Դա Նոր Զուղայեցի ապակեգործների պատմութիւնն է: Նրանք արքայի պալատից գողանում են արքայական գանձի մի մասը, որի հետեւանքով էլ ժողովուրդն ենթարկում է տուգանքի:

Ա. Ե.

Ա. Ե.

և նուիրատու թիւներով սիրելի է դանձում նոր Զուգայի ժողովրդին: Բնորոշ է և այն, որ երբ նա ամէն անգամ թէ՛հրանից դալիս է Սպահան (1825 թ., 1834 թ.), այցելում է նաև նոր Զուգա և հիւրասիրում ազա Ամիրեանների ապարանքում: Դա այն շրջանն էր, երբ նոր Զուգայեցի այդ խոշոր կապիտալիստները Սմարանդում աֆիոնի մենափաճառութեամբ 1820—26 թուականը մեծամեծ գումարներ էին դիզել և ապրում էին անսահման ճոխութեան և փարթամութեան մէջ: Այդ շրջանում էլ ահա նրանք թուում է որ Փաթալի Շահին դիւր գալու համար իրենց ապարանքի մի սենեակի որմերն ամբողջապէս նկարագրադարել են տալիս, որ վերջանում է Շահի մահից մի տարի յետոյ՝ 1251 (1835) թուականին: Այդ միակ թուականն էլ մեզ պարզում է սենեակի նկարների հարիւր հինգ տարուայ պատմական անցեալը:

*

Բարձր առաստաղով, քառակուսի մի փոքրիկ սենեակ է դա, որի ոչ միայն դռներն ու դաճէ պատերը, այլ և ամբողջ առաստաղը դարդարուած են նրբարուեստ նկարներով: Գեղարուեստական մի ամբողջ աշխարհ է դա, որ իր բովանդակութեամբ արտայայտում է Իրանի պայտտական թեթև, անհոգ և դուարթ կեանքը: Այնտեղ դուք տեսնում էք Փաթալի Շահի տարրեր դիմազները, տեսնում էք պալատական իշխաններ և նազանի, նուրբ գեղեցկուհիներ: Տեսնում էք նաև կարմիր վարդեր, ծաղիկներ, թռչուններ, պտուղներ, ծաղկազարդեր և արեւելեան նուրբ տարազներ: Նոյնպէս գիտում էք արեւելեան պարի, երաժշտութեան և որսորդութեան տեսարաններ: Բնորոշ է, որ այստեղ իւրաքանչիւր գէժք ունի իր յատկանշական դիժը, որ նկարիչը արտայայտել է վրձինի համարձակ գծերով և երանդներով: Բէլալիզմն է իշխում այդ որմնանկարներում, որոնք զբաւում են ձեր ուշադրութիւնը ո՛չ միայն գոյների ու գծերի հրաշալի ներդաշնակութեամբ, այլ և գեղարուեստական պարզութեամբ, խորութեամբ և զինամիկայով: Նկարներ, որոնք իրենց ուրոյն բովանդակութեամբ մի ամբողջական շարք են կազմում և կարող են նկար-

չական որ և է լաւագոյն թանգարանի զարդը կազմել:

*

Սենեակի դրան ճիշդ դիմաց, դաճէ պատի վրայ, ձեր ուշադրութիւնը զբաւում է մի մեծ նկար: Դա Փաթալի Շահն է (թիւ 1): Գեղարուեստական արժէքաւոր մի գծագրութիւն է դա, ուր դուք տեսնում էք Իրանի արքայի խոհուն հայեացքը, իսկ սեւ, երազուն աչքերի մէջ կարգում նրա պայծառ միտքը: Մի առանձին լրջութիւն և անդորրութիւն կայ նրա խորհրդաւոր արտայայտութեան մէջ, որին առանձին երանգ են տալիս սեւ կամար ունքերը, պիսը և երկար, շատ երկար, մօրուքը, որ սկսում է այտերի ամենավերեւի մասից և հանդարտ իջնում որովայնի վրայ: Սև մօրուսին հետ ներդաշնակում է սեւ, նրբին թաղը, որ երիզուած է մարգարիտէ մի նուրբ շարանով: Արքան բազմել է մի նուրբ և ընտիր գորգի վրայ և յենուել դունաւոր ազամանդներով զարդարուն մի գեղարուեստական բարձի: Հագել է արքայական նոյնքան նրբին մի զգեստ, իսկ մէջքից կախուած կեռ սուրբ հանգչում է ծնկների վրայ: Վերեւը՝ իշխում է մի գեղեցիկ բնանկար, իսկ շուրջը զարդարուած է նուրբ մանրանկարներով: Առհասարակ նկարն իր ամբողջութեամբ մի գեղարուեստական ստեղծագործութիւն է, ուր առանձին նրբութեամբ իրար հետ ներդաշնակում են սեւ, կապոյտ, մանիշակագոյն, կարմիր, նարնջի և մանաւանդ պուտ-պուտ սպիտակ գոյները: Այդ կենդանի և արտայայտիչ նկարում դուք տեսնում էք իր ժամանակի տաղանդաւոր պօրտրէտիստ նկարչի համարձակ և հմուտ վրձինը: Նկարի վերեւի մասում իրաներէն գրուած է. «Իս սուլթանի Շահէնշահ Փաթալի, 1251»:

Շահի աջ և ձախ կողմերում նկարուած են երկու պէյլաթներ: Դրանք Փաթալի Շահի պալատի տեսարաններն են, որոնք զարդարուած են բարձր, կանաչ ծառերով և աւաղաններով: Սակայն նկարներին առանձին փայլ են տալիս արեւելեան պտուղները: Աջ կողմի նկարի ներքեւում ժպտում են ձեզ Իրանի համեզ պտուղներից՝ խնձոր, տանձ, սեխ, ա՛յնքան բնական,



Պատկեր 1.— Փարալի Շահ
(Որմնանկար Նոր Զուղայում)

խաղող եւ վարունդ, որոնք գրգռում են ձեր
ախորժակը: Բայց դուք ուտելու առաջնութիւ-
նը տալիս էք ձախ կողմում նկարուած պտուղ-
ներին: Այնտեղ, վերեւից, նայում է ձեզ կարճ
կոթով եւ կանաչ տերեւով մի սերկեւիլ. ներ-
քեւում բաղմել է Սպահանի յայտնի շաքարա-
համ սեխը, որի կտրուած մի մասում խրուած
է սպիտակ կոթով մի դանակ. մօտը գրուած
է մեծ, կտրուած, սեւ կորիզներով, կաս-կար-
միր մի հասուն ձմերուկ. ա՛յնքան բնական է,
որ դուք տրամադրուած էք գոնէ մի շերտ ու-

տել: Քիչ հետո դարսուած են հասուն եւ մեծ
«կեարմաք»ները 1) եւ մի խնձոր: Այդ պտուղ-
ներն ընդձում են նկարչի նատիւր-մորտ նկա-
րելու խոշոր տուեալները:

Բայց նկարչի հմուտ վրձինի մասին ձեզ
աւելի ցայտուն դազափար են տալիս պատերի
վրայ նկարուած պալատական քնքուշ, երազա-
յին էակները: Ահա այն գեղեցկուհիներից Շա-

1) Սեխի փոքր եւ կլոր տեսակը: Ա. Ե.

հի աւատե կոչուհին (թիւ 2) : Նա ծնկասօր
 եւ նազանի դիրքով նստել է, նուրբ ձեռքերով
 բռնել արեւելեան դափը եւ մեղմ նուագում է :
 Նայում է նա ձեզ իր նշածեւ, սեւ անուշ աչ-
 քերով, որոնք երկրում եւն ազեղի նման սեւ
 յօնքերով, որոնց առանձին երանդ եւն տալիս
 նրա սեւ, գանդուր, երկար վարսերը, որոնք
 բանաստեղծական զծագրութեամբ զարդարել
 են նրա կարապի վզի եւ ամբողջ իրանի երկու

եզրերը : Հասել է նա մի նուրբ եւ ընդամուկ
 տարազ, ուր իշխում են գլխաւորապէս սպի-
 տակ, կարմիր, կապոյտ, մանիշակագոյն եւ
 բաց դեղին երանգները : Նայում էք Իրանուհու
 արեւի նման պայծառ զիմացմին, նրա աչքերի
 բանաստեղծական արտայայտութեան, նուրբ
 իրանին, գեղեցիկ տարազին եւ զգում, որ
 նկարիչը կարողացել է արուեստագէտի վարպետ
 վրձինով կերտել Իրանի պալատական գեղեց-



Պատկեր 2.— Պալատական երգչուհի
 (Որմնանկար Նոր Զուգայում)

կուհու մի կենդանի տղայար: Դա իր ամբողջութեամբ, կարելի է ասել, արեւելեան քնարերգական մի բանաստեղծութիւն է որը նկարիչը մարմնաւորել է վրձինի մի ամբողջական դժագրութեամբ, մի գիծ, որը յատուկ է Իրանի գասական նկարչութեան:

Պալատական երգչուհուց քիչ հետո արուեստագէտը նկարել է Փաթալի Շահի մի այլ նկարը: Դա մի մեծ եւ ամբողջական պատկեր է: Այնտեղ Շահն այլեւս մենակ չէ, այլ շրջապատուած է իր պալատականներով: Բազմել է նա թաղաւորական գահի վերայ՝ ազամանդադարդ թաղը գլխին: Գահի ետեւում կանգնել են պալատական չորս իշխանուհիներ, իսկ ստեբրի մօտ՝ վեց պալատականներ, որոնք միմի ձեռքերը կրճքերին դրած՝ ասես սպասում են հրամանի: Իշխում են վառ-կարմիր, կանաչ, սրճագոյն, սեւ երանգները: Արքան նայում է ձեռք սեւ, խոհուն, թափանցող աչքերով եւ մտադրազ հայեացքով, ասես խորասուզուել է խոր մտքերի մէջ եւ դժում է պետական մի նոր ծրագիր: Հետուն իշխում է մի գեղեցիկ բնանկար: Դա պալատի չքնաղ պարտիզի տեսարանն է:

Բայց որմնանկարների մէջ կայ մին, որն իր բովանդակութեամբ ցոյց է տալիս ժամանակաշրջանի կանանց ստրկական վիճակը: Դա պալատական մի գեղեցիկուհի է, որ երկու ձեռքերի վրայ կեցած է գլխի վայր, մերկ ոտքերը գէպի վեր պատին յենած: Արեւելեան հեշտասիրութեան յատկանշական մի տեսարան է դա, որը պատկերում է հին արքաների պալատի կենցաղի մի բնորոշ էջը: Այդ տեսարանը նկարիչը պատկերել է բանաստեղծական Փօնի վրայ. իշխանուհու գեղեցիկ, հարուստ սեւ վարսերը կախուել են ցած եւ առանձին երանգ տալիս նրա արտայայտիչ սեւ խոշոր աչքերին եւ լուսնի նման պայծառ դէմքին: Բայց առանձնապէս գեղեցիկ է իշխանուհու նուրբ իրանը զարդարող տարազը. արուեստագէտը նկարել է այնպիսի մանրամասնութեամբ եւ հարադատութեամբ, որ դուք պարզ գաղափար էք կազմում ժամանակաշրջանի պալատական կանանց տարազի ճոխութեան, նրբութեան եւ գեղարուես-

տականութեան մասին: Այդ տեսակէտից էլ նկարն ունի ազդադրական արժէք:

Ահա ձեզ եւ պալատական չքնաղ պարուհին, որ նրբին մասներով նուագում է փոքրիկ դայիբէն. նա գրաւիչ նազանքով մեղմ թեքել է նուրբ իրանը եւ երաժշտութեան ուրիշ մի ներքոյ սկսել իր գեղարուեստական պարը: Նրա արեւ դէմքին առանձին փայլ են տալիս մինչեւ պարանոցն իջնող գանգուր սեւ մազերը եւ գեղարուեստական նուրբ տարազը: Դա իր ամբողջական ներդաշնակութեամբ ո՛չ միայն նրկարչութիւն է, այլ եւ արեւելեան մի գեղեցիկ բանաստեղծութիւն:

Այդ սքանչելի պատկերից յետոյ դուք կանդէք առնում մի այլ մեծ նկարի առաջ: Դա որսորդական մի ամբողջ տեսարան է, որ պատկերացնում է արեւելքի հարուստ բնութեան մի էջը: Այնտեղ որսի են իջել պալատական իշխաններն իրենց երիւարներով եւ բարակներով: Նրանցից մի քանին իրենց երկար նիզակներով արդէն որսում են վաղը, յովաղ, իսկ միւսները գեռ հետապնդում են իրենց որսերին: Նկարիչը կարողացել է Արեւելքի բնանկարներն եւ պալատական որսորդների կեանքը ներդաշնակել դունապեղ երանգներով: Նկարն աչքի է ընկնում իր բազմազան տեսարաններով ու տիպերով:

Որսական աշխարհին կից տեսնում էք դարձեալ պալատական մի գեղեցիկուհու նկարը: Դա եւս մի պարուհի է (Թիւ 3), որ աջ ձեռքը բարձրացրել է օդի մէջ, ձախով բռնել նրբին զգեստը եւ սկսել է գեղարուեստական պարը: Աչքերի ի՛նչ գեղեցիկ արտայայտութիւն, ի՛նչ պիսի սիրուն վարսեր, դիմապծի ինչ նրբութիւն: Ասես դա ո՛չ թէ նկար է, այլ մի իրական չքնաղ էակ:

Գեղարուեստական արժէք են ներկայացնում նաեւ առաստաղի նկարները: Դրանք ոսկեպոյն ծաղիկներ, թռչուններ, կանաչ տերեւներով վարդեր, այլարանական նկարներ եւ այլ զարդանկարներ են, որոնք իրար հետ են ներդաշնակում դեղին, լազուարդ, ոսկեզօծ, կանաչ, կարմիր եւ այլ երանգներով: Ափսո՛ս, որ առաստաղի նկարների մի մասը թափուել է



Պատկեր քիւ 3. — Պալատական պարուհի
(Որմնանկար Նոր Զուգայում)

և վնասուել է գեղարուեստական ընդհանուր ներդաշնակութիւնը:

Սենեակի ցածի մասում, առանձին դարակներում, դուք տեսնում էք նոյնպէս չքնաղ Իրանուհիներ, որոնցից մէկը ձեռքին բռնել է ծաղիկներով լի մի կողով, մի ուրիշը՝ մի խրնձոր: Նրանց շուրջի պատերը ևս նկարուած են ծաղիկներով և թռչուններով:

Սենեակն ունի չորս հիմնական դուռ, որոնցից երեքը նկարազարդուած են. ոսկեփայլ Փօնի վրայ նկարուած են ծաղիկներ, վարդեր և թռչուններ:

Ահա սրանք են Նոր Զուգայի մի հին, պատմական ապարանքի որմնանկարները, որոնք վկաներն են իրանական արուեստի նրբութեան: Այդ նկարներն ընդգծում են այն փաստը, որ Ալֆէվեան պատմաչրջանում զարգացած և գեղարուեստական որոշ կատարելութեան հասած որմնանկարչութիւնը հետագայում, ո՛չ միայն կանգ չի առնում, այլ ևս անում է հետաքրքիր նուաճումներ: Այդ նկարները պատմում են նաև ձեզ ժամանակաչրջանի Իրանի խոշոր արուեստագէտի ստեղծագործական առանձնայատկութիւնների մասին և միաժամա-

նակ ցոյց են տալիս դարաշրջանի նկարչական արուեստի մէջ տիրող ոճի, ուղղութեան եւ դպրոցի պատկերը:

Ուշագրաւ է այն, որ այդ մոտիվները ձեզ բնորոշ դադափար են տալիս այդ ժամանակաշրջանի Իրանի պալատական ուրախ, դուարթ կեանքի եւ ուրոյն կենցաղի մասին: Ահա թէ ինչո՞ւ այդ նկարներն ունեն ո՛չ միայն դեզարուեստական այլ եւ պատմական - ազգագրական արժէք:

Վերջին անգամ նայում եմ աննման սրմնանկարներին, ուշադիր դիտում պատերը, անկիւնները, առաստաղը, փնտում նկարչի հմայիչ անունը, որոնում եմ որ եւ է արձանագրութիւն արուեստագէտի ազգանունը յիշատակող: Ձեմ դտնում ո՛չ մի տող, ո՛չ մի յիշատակագիր:


Տաղանդաւոր նկարիչը թաքնուել է անյայտութեան մէջ: Այդպէս էին հին ժամանակ ձեռակերպուած, հմուտ եւ վարպետ նկարիչները. նրանք համեստ էին, շատ համեստ, բայց մեծ իրենց տաղանդով եւ վրձինով *):

Նոր Զուղա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

*) Որմեանկարներից Ֆաթալի Շահի նկարը յատկապէս մեր յօդուածի համար ձրիարար լուսանկարեց Պ. Վահան Տէր կիրեղեանը, որին յաշտում եմ ջերմ շնորհակալութիւններս: Շնորհակալութիւն նաեւ Օր. Աննա Ալեքսիեանին, որ հնարաւորութիւն տուեց ուսումնասիրելու իրենց տան պատմական նկարները:

Ա. Ե.



Արամ Երեմեան